

Ամբողջ Աֆրիկյան բորբ արևը զարմանալի տեսարան էր բացել: Ընձուղտները, զեբրերը, փղերն ու մյուս բոլոր գազանները հավաքվել էին Առյուծաքարի շուրջը: Հիշարժան օր էր. Սուֆասա արքան և Սարաբի թագուհին ծեր իմաստուն պավիան Ռաֆիքիին հրավիրել էին իրենց առաջնեկ կորյունին գազանների թագավորությանը ներկայացնելու: Ռաֆիքին մեծ հանդիսավորությամբ ճագուկի ճակատին կարմիր փոշով նշան արեց, հետո վեր պարզեց՝ ի ցույց աշխարհի: Բոլորը խանդավառ ողջունեցին ու խոնարհվեցին արքայազն Սիմբայի առջև:



Բայց ընտանիքի անդամներից մեկը հանդիսությանը չէր երևացել: Այդ մեկը Մուֆասայի եղբայր Սպին էր:

Մուֆասան իր օգնական Զազուի հետ գնաց եղբոր մոտ՝ պարզելու, թե բանն ինչ էր:

Զազուն Սպիին հիշեցրեց, որ եղբորն աչքալուսանքի եկածների հերթում նա առաջինը պիտի լիներ:

– Նախքան բրդի կծիկի ծնվելն իմ հերթն առաջինն էր,– նետեց Սպին՝ չարացած, որ գահի ժառանգորդն էլ ինքը չէր լինելու, ու մեջքը նրանց դարձրեց, որ հեռանա:

– Ասածդ «բրդի կծիկը» որդիս է և քո ապագա արքան,– նրա հետևից բարկացած գոմռաց Մուֆասան:

Ժամանակն անցնում էր, Սիմբան՝ մեծանում, և շուտով ժիր ու հետաքրքրասեր կորյուն էր դարձել:

Օրերից մի օր վաղ առավոտյան Մուֆասան նրան Առյուծաքար բերեց:

– Արևի սփռած լույսի տակ ինչ տեսնում ես, մեր թագավորությունն է,– ասաց որդուն:– Մի օր մայրամուտի հետ իմ ժամանակն էլ կմարի, ու լուսաբացին դու արքա կլինես:

– Ճիշտ,– գոչեց Սիմբան:– Իսկ ստվերոտ տեղերն ու՞մն են:

– Դրանք մեր տիրույթից դուրս են: Չլինեմ չիմանամ՝ այդ կողմերը գնաս,– սաստեց Մուֆասան:

ամբողջական գիրքը՝

ԿԵՍՏՈՂ